

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն

Սույն ժողովածուի նպատակը Հայաստանի Հանրապետությունում պարենային ապահովության և աղքատության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության առավել ամբողջականության ու համապարփակության ապահովումն է:

Պարենային ապահովության կառուցվածքային տարրերը՝ պարենի առկայությունը, հասանելիությունը, օգտագործումը, բնութագրված են մակրոտնտեսական, զբաղվածության, սոցիալական իրավիճակի, գյուղատնտեսական մթերքի արտադրության և այլ ցուցանիշներով, պարենային և այլ սպառողական ապրանքների գներով, իսկ աղքատությունը՝ տնային տնտեսությունների հետազոտության (եկամուտների ու ծախսերի կառուցվածքի և այլն) արդյունքներով: